

«ՀԱՅ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ» ԹԵՄԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹ-ՋՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մեպդեմքերի 22-ին, Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ, Հայոց գրերի 1600-ամյակի պանծակի հոբելյանի շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Հայ մեկնողական գրականության դպրոցները» թեմայով գիրաժնողովը, որին մասնակցում էին ինչպես Հայաստանից, այնպես էլ արդերկրից հրավիրյալ շուրջ 25 գիրաժյան մշակներ:

Գիրաժնողովը բացեց Մայր Աթոռի Գարեգին Ա ասրբածարանական-հայագիրական կենտրոնի տնօրին Ազար Բողոյանը: Նա, անդրադառնալով հայ մեկնողական գրականության պարզմությանը, հարկապես շեշտեց մեկնողական երկերի գրագրության կարևորությունն ու գիրական լայն շրջանակներին ներկայացնելու անհրաժեշտությունը: Վյուիեփու ներկաներին իր օրինությունը բաշխեց Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրաբարքը, ողջունելով գիրաժնողովի մասնակիցներին, հոյս հայրննց, որ այն պիտի գա լրացնելու այն բացը, որն առկա է մեկնարանական գրականության ասպարեզում շաբերին հատորդ դարձնելով մեր նախնյաց հարուստ ժառանգությանը:

«Մեր պարմության բացառիկ և հերոսական երևոյթներից է, որ հաճախ դժվարին պայմաններում, օդարների լին փակ, նեղությունների ու հալածանքների մեջ հայ միբրը վեր է բարձրանում ժամանակի սահմաններից ու թևածելով ասրբածային ոլորտիներում ծնունդ է փախս այնպիսի հիասքանչ սրբազնությունների, որոնք կենարար լոյսով ոռոգում են առ Ասպիկա գիրնչացող հոգիները հավաքացյալների: Արդի ժամանակներում, երբ լայն քարածում գրած քրիստոնեական գրաքեր ուղղություններ ասրբածաշնչյան սեփական մեկնություններն են փորձում արմադրավորել հասարակության մեջ, առավել քան կարևոր է Սուրբ Հոգու ներշնչմամբ գրքած եկեղեցական հեղինակների սուրբքրային մեկնությունների վերհանումն ու վերարժենորումը մեր կյանքից ներս: ...Ներկա գիրաժնողովը, լիահոյս ենք, պիտի լինի մեկնողական գրականության հանգամանալից լուսումնասիրումն այն գեղեցիկ սկիզբը, որով մեր անգնահատելի արժեքները պիտի մարդուցն և ճանաչելի դառնան ամենքին՝ հոգևոր իմաստության, հավաքի ու նվիրումի լոյսը սիտելով մարդկային հոգիներում», - նշեց Նորին Սրբությունն իր հոսքում:

Վյուիեփու գեղի ունեցավ «Ասրբածաշնչի գրքերի հայ մեկնությունների գրադարան» մագիստրաշարով հրաբարակված երկու հավորների շնորհանդեսը: Մագիստրացի գիլավոր խմբագիր S. Եզնիկ Խոսք. Պետրոսյանը խոսեց մագիստրացի որդեգրած սկզբունքների և նշանակության մասին՝ ընդգծելով հայ իրականության մեջ սրբազնության մեկնությունների գրագրության անհրաժեշտությունը համարիչական և համաշխարհային մշակույթի գրեսանկյունից, որը կոչված է բավարարելու հայ քրիստոնյայի հոգևոր պետքերը՝ հաղորդ դարձնելով նրան մեր Եկեղեցու հայրերի հոգեշահ գրվածքներին:

Վյուիեփու գիրաժնողովի առաջին՝ «Հայ մեկնողական գրականության համարիչական ակունքները» խորագրված նիստում, որը նախագահում էր Կենտրոնական Եվրո-



ԳԻՏԱՎՈՐՈՎԻ ԸՆԹԱՑՔՆԻ



ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎՐԱՀԱՅՐԱԿԱՆ ՎՐԱՀԱՅՐԱԿԱՆ ՎՐԱՀԱՅՐԱԿԱՆ ՎՐԱՀԱՅՐԱԿԱՆ



պայի հայրապետական պատվիրակ S. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, կարդացվեցին հերթևալ զեկուցումները. «Աստվածաշնչի այլաբանական մեկնության նախահայրերը, Փիլոն Ալեքսանդրացին և իր նախորդները» (Արքահամ Տերյան՝ Նյու Յորքի U. Ներսես Հոգևոր ճեմարան), «Մեկնությունները միջնադարայան վրացական թարգմանություններում» (Էգուշա Խինքիբիձ՝ Թբիլիսիի Պետական Համալսարան), «Արքսուրելի «Յաղագ աշխարհ» գործի հայերեն թարգմանությունը և մեկնությունները» (Գայանե Պողոսյան՝ Երևանի Պետական Համալսարան):

Երկրորդ՝ «Ծեսը և նվիրապետական համակարգը մեկնություններում» նիստում, որը նախագահում էր Պարույր Մուրադյանը, կարդացվեցին «Առաջաների համապատվության Սուրբքրային վկայությունների Մշտիքար Սկեռացու մեկնաբանությունները» (S. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան՝ Կենդրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ), «Կենդ Դիոնիսիոս Արեոպազացու հայերեն մեկնությունները» (Մերժի Լա Պորտա՝ Երուսաղեմի համալսարան), «Կանոնական իրավունքը մեկնողական գրականության գիտադաշտում» (Ազար Բողոյան՝ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ), «Տրդափր բնականարար Կոստանդինից առաջ է» (Մարսիմ Եվայան՝ Ֆրանսիայի Էրա Ան Պրովանսի համալսարան) զեկուցումները:

Երրորդ՝ «Աշխարհի ճանաչողությունը մեկնություններում» նիստում, որը ղեկավարում էր Արվեստագիտության դրկոր Վիգեն Ղազարյանը, կարդացվեցին հերթևալ զեկուցումները. «Թարգմանական խմնիրներ» (S. Եզնիկ Խաչիսկոպոս Պետրոսյան՝ Մայր Արքունի Միջնեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանակուու), «Գրիգոր Նյուսացու բնափիլսոփայական և բժշկագիտական հայացքները «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» գրքում» (Միքելլա Վարդանյան՝ Մաշխոցի անվան Մաքենադարան), ««Գիրը պատճառաց» ժողովածուն միջնադարյան մեկնությունների հանրագիտարան» (Էռնա Շիրինյան՝ Մաշխոցի անվան Մաքենադարան), «Գրիգոր Տաթևացու «Երգ երգոցի մեկնությունը» (Լիլիթ Ռովենիյան՝ Երևանի մանկավարժական համալսարան):

Հաջորդ օրվա՝ սեպտեմբերի 23-ի առաջին «Աստվածաշունչը և մեկնողական գրականությունը» նիստում, որ վարում էր S. Եզնիկ Խաչիսկոպոս Պետրոսյանը, կարդացվեցին հերթևալ զեկուցումները. «Լուծմունք կամ սուրբքրային պոեզիա. չափածո մեկնությունները Աստվածաշնչի հայկական թարգմանության գրքերում» (Զքիսփիան Հաննիկ՝ Գերմանիա, Վյուրցբրոգի համալսարան), «Կիբարկումներ ավանդարար Ս. Մեսրոպին վերագրվող Ավերարանի շուրջ» (Պարույր Մուրադյան՝ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ), «Տերունական աղոթքի մեկնությունն ըստ Ս. Գրիգոր Տաթևացու և Օգոստինոս Երանելու» (Արքուր Մաթևոսյան՝ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ), «Կայ մեկնողական գրականության աղբյուրները» (Արմեն Տեր-Սպելիհանյան՝ Մաշխոցի անվան Մաքենադարան), «Գրացի համալսարանի գրադարանի հմբ. 2058 մագյանը» (Էրիխ Ռենար՝ Ավստրիա, Գրացի համալսարան):

Օրվա երկրորդ՝ «Կայ մեկնողական գրականության առանձնահավկությունները» նիստը, որը նախագահում էր Արքահամ Տերյանը, կարդացվեցին հերթևալ զեկուցումները. «Բարոյախոս ժողովածուն» (Գոհար Մուրադյան՝ Մաշխոցի անվան Մաքենադարան), «Մարդությանը վերաբերվող հասկացությունները Եղիշեի երկում» (Ռ. Ոհկարոյ Պանե-

Խորալիս, Բողոքիայի համալսարան), ««Թուղթ առ Ողիմպիադան» որպիս մեկնողական ծրագիր և նրա հայերեն թարգմանությունը» (Օլգա Վարդագարյան՝ Երևանի «Պետական համալսարան»), «Ոչ ձուկ, ոչ էլ թռչուն. նոր հայացք ավանդաբար Գրիգոր Արշարունուն վերագրով Կյուրեղ Երևասահեմացու Մեծ Պահքի հարցումն-պարապիսանի ճառերի հայկական մեկնաբանության» (Պիրեր Քառո՞ ԿՍՆ Կալիֆոռնիայի համալսարան):

Օրվա երրորդ՝ «Մեկնությունը՝ դարաշրջանի պարմության հայելի» նիստը, որը վարում էր Քրիստիան Հաննիկը, կարդացվեցին հերկույալ զեկուցումները. «Ը-Ժ-Ք դարերի գոլուցոյցի արքացոյումը ծիսական ժողովածուներում և մեկնողական գրականությունում» (Տ. Շատր Ռընու՝ Ֆրանսիա, ԱԱ Կալկայի վանք), «Կաթոլիկների «Ընդդեմ հայոց գործերը ԺԴ դարի կեսերին»» (Վլոդ Մութաֆյան՝ Փարիզի ԺԳ համալսարան), «Դարաշրջանի իմաստավորումը Խոսրով Անձնացու և Գրիգոր Նարեկացու մեկնողական երկերում» (Վլեծ Վարդանյան՝ ԳԱԱ Պալմության ինստիտուտ), «Ներումյանները, Մանսելները և «Ամրիոքի Ասիզների» հարմարեցումը հայկական միջավայրին» (Ժիրայր Դեղեյան՝ Ֆրանսիա, Մոնպելիեի համալսարան):

Սեպտեմբերի 24-ին Օշականի Ա. Մեսրոպ Մաշտոց դպրագրանը դրելի ունեցավ «Հայ մեկնողական գրականության դպրոցները» գիրածողովի եզրափակիչ նիստը:

Ժողովականներին Ա. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ընդունեց Արագածոտնի թեմու Ամենայն Հայոց Կաթոլիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ արք. Տոնիկյանը: Հայր Մուրքը, բարի գալուստ մատթելով գիրաժողովի մասնակիցներին, պարահական ջամարեց, որ եզրափակիչ նիստը դրելի է ունենում հենց Օշականում, որ ամփոփված է առաջին հայ ուսուցչի՝ երանելի Ա. Մեսրոպ Մաշտոցի մարմինը: Նա, հայելով Ա. Մեսրոպի բարեխոսությունն ամենքի համար, բարի աշխաբանք մատթեց գիրածողովի մասնակիցներին:

Ժողովականներն իրենց խոնարհումը բերեցին Ա. Մեսրոպ Մաշտոցի շիրմին՝ ուխտելով հավաքարիմ մնալ Ա. Մեսրոպի և նրա աշակերտների աննկուն ոգուն:

Օշականում դրելի ունեցած «Մեկնությունը և հայ մշակույթը» նիստի ընթայքում, որը վարում էր պարմական գիրությունների դղկոր Ազար Բողոյանը, կարդացվեցին հերկույալ զեկուցումները. «Կենդանիների պարկերագրությունը՝ «Խորանների մեկնություններում»» (Վիգեն Ղազարյան՝ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ), «Հայագառ թուրքերն մեկնության մեջ» (Վահագիկ Սպեհանյան՝ ԳԱԱ Արևելագիրության ինստիտուտ), «Հայագառ թուրքերն մեկնության գրականությունը» (Տաման Մարտիրոսյան՝ ԳԱԱ Արևելագիրության ինստիտուտ), «Զեռագրագիրական ընդհանրությունները հայկական և սլավոնական ձեռագրերում» (Ալսանիա Կուրովա՝ Սոֆիայի Իվան Շոյչն կենդրոն), «Պահկալունի կաթողիկոս-թարգմանչների դպրոցը» (Բարեկ Օժեն՝ Ֆրանսիա, Մոնպելիեի համալսարան):

Եզրափակիչ նիստի ընթացքում լսվեցին զեկուցումների «Կենդանիների պարկերագրությունը՝ «Խորանների մեկնություններում»», «Հայագառ թուրքերն մեկնողական գրականությունը», «Գրքագիրական նոյնությունները հայկական և սլավոնական ձեռագրերում» և «Պահկալունի կաթողիկոս-թարգմանչների դպրոցը» թեմաներով: Զեկուցումների ավարտից հետո ներկաներն ամփոփեցին գիրաժողովի արդյունքները՝ կարևորելով մեր նախնյաց թողած հսկայական ժառանգության ուսումնասիրության անհրաժեշտությունը և գրական հուշարձանների պահպանությունը:

Նիստի ավարտին գիրածողովի մասնակիցներն այցելեցին Սաղմոսավանք:

Երեկոյան գիրաժողովի մասնակիցներին Մայր Վթոր Սուրբ Էջմիածնում ընդունեց Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կարողիկոսը: Մայր Վթորի Գարեգին Ա ասդվածաբանական-հայագիրական կենքրոնի փնօթեն Ազար Բողոքանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց գիրաժողովի ընթացքն ու արդյունքները:

Նորին Սրբությունը, ողջունելով գիրաժողովի մասնակիցներին, իր ուրախությունը հայփնեց, որ այն դեղի ունեցավ հայոց գրերի 1600-ամյակի պանծալի հոբեյանի շրջանակներում և հարկապես Ս. Էջմիածնում, որ անցած դարասկզբին Մայր Վթորի մի շարք միաբանների շնորհիվ ծաղկում էր ապրում հայագիրությունը: Հայոց Հայրապետը ներկա գիրինականներին ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու առաջ ծառացած խնդիրները: Նա հույս հայփնեց, որ Եկեղեցականաց նոր սերունդն առավել նախանձախնդիր պիտի լինի մեր նախնյաց ժառանգության ուսումնասիրությանը, վեր հանմանն ու ընթերցողների լայն շրջանակներին ներկայացմանը:

Իրենց հերթին ներկաները շնորհակալություն հայփնեցին Վեհափառին գիրաժողովի կազմակերպման համար՝ հույս հայփնելով, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Ս. Էջմիածինին իր շուրջը պիտի համախմբի գիրինականներին:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՄԱՎԱՐԳ**